ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի

Գործողություն 1.8: Հետևել ձեռքբերումներին և առաջարկություններ ապագայի համար

Առաքելությունն իրականացրել են

Պրն. Քարստեն Զանգենբերգը, Դանիայի վիճակագրության փորձագետ
Պրն Յեսպեր Էլեմոսե Յենսենը, Դանիայի վիճակագրության փորձագետ

2017թ. մայիսի 30–ից - հունիսի 2-ը

Նախնական տարբերակ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

STATISTICS DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալները</u>

Քարստեն Զանգենբերգ
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Էլ.-փոստ: cuz@dst.dk

Յեսպեր Էլեմոսե Յենսեն
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ: +45 3917 3244
Էլ. փոստ: jej@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Կարգավիճակը ծրագրի սկզբում 5
3. Ծրագրի արդյունքների կարգավիճակը 5
4. Ձեռքբերումների կայունություն 7
5. Առաջարկություններ ապագայի համար (կարճաժամկետ և երկարաժամկետ) 9
6. Կարիքների նույնականացում լրացուցիչ աջակցության համար 11
7. Չլուծված խնդիրներ 12
Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք 14
Հավելված 2. Առաքելության ծրագիր 16
Հավելված 3: Հանդիպումների մասնակիցներ 16

Հապավումների ցանկ

ԲԿՀ (CMS)	Բովանդակության կառավարման համակարգ
ՓՕ (CoP)	Փորձառության օրենսգիրք
ԵՄ	Եվրոպական Միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՈԱՇ (QAF)	Որակի ապահովման շրջանակ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում:
Սա ծրագրի բաղադրիչ 1-ի շրջանակներում իրականացված վերջին առաքելությունն է:

Առաքելության նպատակն էր.

- Քննարկել բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից ի վեր
- Քննարկել ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Նախապատրաստել առաջարկություններ ձեռքբերումների կայունության վերաբերյալ
- Նախապատրաստել առաջարկություններ ՀՀ ԱՎԾ-ի հետագա աշխատանքների համար ծրագրի ավարտից հետո
- Բացահայտել առկա խնդիրները և կարիքները հետագա աջակցության համար, եթե այդպիսիք կան

ԱԵ փորձագետներն իրենց երախտիքն են հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, որոնց հետ հանդիպումներ են ունեցել: Փորձագետների Հայաստանում գտնվելու ընթացքում նշված անձանց կողմից ստացված աջակցությունը և արժեքավոր տեղեկատվությունը մեծապես նպաստել է նրանց աշխատանքին:

Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուներին և ներկայացնում են մեր լավագույն մասնագիտական կարծիքը, և դրանք որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

Կարևոր է նշել, որ մենք՝ երկու փորձագետներս էլ, մեծապես տպավորված ենք Թվինինգ ծրագրի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների նվիրված աշխատանքով և ձեռք բերված արդյունքների չափով:

Մենք համոզված ենք, որ ՀՀ ԱՎԾ-ն կանի հնարավորինս ամեն ինչ՝ ապահովելու համար, որ արդյունքները և նոր ընթացակարգերն ու նախաձեռնությունները շարունակվեն և բարգավեճեն Թվինինգ ծրագրի ավարտից հետո:

Երկու հիմնական հարցեր պետք է մտապահել և դրանցով ուղղորդել ՀՀ ԱՎԾ-ի տվյալների տարածման նախաձեռնությունները. դրանք են՝ <<արժեքը սպառողների համար>> և մշտապես ներդրումների անհրաժեշտությունը տարածման հարթակում:

Երկրորդը ավելի դյուրին է: www.armstat.am և armstatbank.am կայքերի SS ենթակառուցվածքները (սարքավորումները և ծրագրային ապահովումը) այժմ տեխնոլոգապես հնացած են և պետք է փոխարինվեն հնարավորինս շուտ: Տարածման ներքո գտնվող SS ենթակառուցվածքը պետք է շարունակաբար փոփոխվի և զարգանա՝ արտացոլելու համար նոր տեխնոլոգիաները և մեր սպառողների կարիքները: Սա աշխատակիցների և ռեսուրսների հետ կապված հարց է:

Քարստեն Զանգենբերգը (Դանիայի վիճակագրության հաղորդակցման, մեթոդաբանության և վաճառքի տնօրենը) հունիսի 1-ին սպառողների հետ կազմակերպված հանդիպման ժամանակ <<արժեքը սպառողների համար>> սկզբունքը հետևյալ կերպ ձևակերպեց՝ <<*Վիճակագրության արտադրանքի կամ ծառայության*

օգտակարությունը և որակը այն չէ, թե ինչ ենք մենք այդտեղ դնում: Դա այն է, թե ինչ են սպառողները դրանից ստանում և ինչպես կարող են դրանք կիրառել>>:

<<Արժեքը սպառողների համար>> սկզբունքով առաջնորդվելը պահանջում է նոր կենտրոնացում և փոփոխություն կորպորատիվ մշակույթում և մոտեցումներում: Սա դժվար և շարունակական ընթացք է ինչպես մի շարք ԱՎՀ-ում, այնպես էլ մեզ համար: Սակայն սա անհրաժեշտ գործընթաց է՝ ապահովելու համար, որ մենք և արդիական և վստահելի լինենք ապագայում:

2. Կարգավիճակը ծրագրի սկզբում

Ծրագրի աշխատանքային պլանի սահմանման ժամանակ որոշվեց անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- Տարածման ռազմավարության արդիականացում
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացում և բարելավում
- Ներկայացված գործիքներ և մեթոդներ սպառողների հետ համակարգված երկխոսությունների համար
- www.armstat.am կարիք ունի արդիականացման
- ՀՀ ԱՎԾ-ն ներդրման կարիք ուներ շարունակելու աշխատանքը որակի հարցերի շուրջ նորաստեղծ Որակի բաժնում

3. Ծրագրի արդյունքների կարգավիճակը

Տարածման ռազմավարության արդիականացում

ՀՀ ԱՎԾ-ի տարածման ռազմավարությունը արդիականացվել է՝ արտացոլելով լավագույն եվրոպական և միջազգային փորձը: Սկզբունքորեն չկա եվրոպական իրավական դաշտ՝ նկարագրելու ազգային վիճակագրական հաստատության կողմից իրականացվող տարածման պահանջները: Սակայն մի շարք ուղեցույցներ և պահանջներ կարող են քաղվել Եվրոպական փորձառության օրենսգրքից (ՓՕ) և հարակից Որակի Ապահովման Շրջանակի աշխատանքից (ՈԱՇ), որը կիրառվում է Եվրոստատի անդամների կողմից: Այս փաստաթղթով տարածման թղթային/տպագրված տարբերակը փոխարինվում է զուտ էլեկտրոնային տարածման իրավիճակով, որտեղ տպագրումը համարվում է երկրորդական տարբերակ:

Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացում և բարելավում

Ներկայիս ՀՀ ԱՎԾ –ի սպառողների բավարարվածության հետազոտությունը անհրաժեշտ էր արդիականացնել և ՀՀ ԱՎԾ-ի տարածման բաժինը Թվինինգ ծրագրի հետ համատեղ արդիականացրեց այդ հետազոտությունը: Հետազոտությունը փոխարինվել է ինտերնետային հարցաթերթիկով: Որոշ քննարկումներ կապված հետազոտության

մեկնարկի և թիրախային խմբերի հետ դեռևս ընթացքի մեջ են, սակայն սրանք չնչին հարցեր են և որևէ ազդեցություն չունեն ծրագրի արդյունքների վրա:

Ընդհանուր վստահության հետազոտություն

Ըստ ՓՕ և ՈԱՇ-ի սպառողների բավարարվածությունը պետք է համակարգված կերպով վերահսկել և զեկուցել: Մենք կարծում ենք, որ ՀՀ ԱՎԾ-ն նույնպես պետք է ներդնի ընդհանուր վստահության հետազոտություն: Վստահությունը շատ երկրների պաշտոնական վիճակագրությունների հանդեպ խիստ ցածր է: Այս պահին, ՀՀ ԱՎԾ-ի հանդեպ վստահության մակարդակը հայտնի չէ: ՀՀ ԱՎԾ-ի կողմից տարածման աշխատանքի առաջընթացը մշտադիտարկելու համար պետք է հնարավորինս շուտ իրականացվի վստահության հետազոտություն: ՏՀԶԿ –ն ներկայումս աշխատում է մի մեթոդաբանական փաստաթղթի վրա, որը կարող է կիրառվել ՀՀ ԱՎԾ-ի կողմից որպես ոգեշնչման աղբյուր այս ոլորտում իր աշխատանքի համար:

Գործիքներ և մեթոդներ սպառողների հետ համակարգված երկխոսության համար

Ինչպես հաղորդակցությունը, այնպես էլ տարածումը պետք է պայմանավորված լինեն մեր սպառողների կարիքներով: Քանի որ վիճակագրությունն ունի մի շարք տարբեր սպառողների խմբեր, մենք որպես ԱՎՀ –ն պետք է իրականացնենք համակարգված երկխոսություններ մեր հիմնական սպառողների խմբերի հետ: Համապատասխան սպառողների խմբերը սովորաբար սահմանվում են տարածման ռազմավարության մեջ և դրանց տրվում է առաջնահերթություն: Փորձառության օրենսգիրքը և ՈԱՇ-ը նույնպես պահանջում են, որպեսզի մենք ներգրավված լինենք սպառողների հետ մշտապես երկխոսություններում և համակարգված մշտադիտարկենք վերջիններիս բավարարվածությունը: Հաղորդակցության և տարածման ռազմավարության արդիականացման և սպառողների բավարարվածության հետազոտության բարելավման անհրաժեշտությունը տրամաբանորեն բխում է այս համակարգված մշտադիտարկման և քննարկման հեռանկարներից: Առաջարկությունն այն է, որ ՀՀ ԱՎԾ-ն ներդնի ընդհանուր վստահության հետազոտություն, որը համարվում է ևս մեկ <<անհրաժեշտ>> գործիք սպառողների հետ երկխոսության համար:

armstat.am կայքի արդիականացում

Կանոնավոր կերպով փորձարկվել է www.armstat.am կայքի հարմարավետությունը սպառողների համար՝ օգտագործելով մի ծրագրային ապահովման գործիք, որը կոչվում է usertesting.com.Արդյունքները հաստատվեցին սպառողների կողմից տրված մեկնաբանություններով, որ հաճախ բարդ և ժամանակատար է եղել գտնել ցուցանիշներ և տվյալներ վեբ կայքում:
Այդ իսկ պատճառով որոշվեց իրականացնել <<գլխավոր էջի>> հիմնական վերակազմակերպում և պարզեցնել ու մաքրել նավիգացիոն կառուցվածքը: Ինչ սովորաբար հայտնի է որպես <<արտաքին տեսք և զգացողություն>> նույնպես ավելի հստակեցվել է և դարձել է առավել արդիական:

armstat.am կայքի ԲԿՀ-ը (Բովանդակության կառավարման համակարգ) համեմատաբար դյուրին դարձրեց այս փոփոխությունների իրականացումը, երբ նշված համակարգի հիմնական ընկալումը հասկանալի դարձավ ՏՏ աշխատակիցների համար: Անհրաժեշտ

տեխնիկական փոփոխությունները այնուհետև իրականացվեցին տպավորիչ մասնագիտական հմտությունների և մեծ խանդավառության շնորհիվ:

Իրականացման ընթացքում համեմատություններ արվեցին մի շարք եվրոպական ԱՎՀ-ի կայքերի հետ և աշխատակիցները բավականին ոգեշնչվեցին և այժմ հստակ պատկերացում ունեն, թե ինչպես իրենք կցանկանային հետագայում զարգացնել www.armstat.am կայքի նախագծումը և ֆունկցիոնալությունը:

ԲԿՀ-ն տեխնիկապես հնացած է և անհրաժեշտ է նոր ԲԿՀ՝ ընթացիկ տեխնոլոգիաների հիման վրա նախքան armstat.am-ի հետագա բարելավումը: ՏՏ –ի համար անհրաժեշտ կլինի ունենալ լրացուցիչ վերապատրաստում համապատասխան տեխնոլոգիաների շուրջ, ինչպես նաև հասանելիություն ունենալ արտաքին տեխնիկական օժանդակությանը նախքան armstat.am-ի հետագա արդիականացումը: Այս պահի դրությամբ առկա տեխնոլոգիան է հանդիսանում սահմանափակող գործոն, այլ ոչ թե աշխատակիցների հմտությունները:

Որակի աշխատանք

Առաջին Թվինինգ ծրագրի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ն Դանիայի վիճակագրության աշխատակիցների հետ միասին կազմեցին բազմաթիվ որակի հռչակագրեր և որակի նկարագրեր վիճակագրական արտադրանքների վերաբերյալ: Այս որակի հռչակագրերը կազմվել են հայերեն և անգլերեն լեզուներով և տարածվել են www.armstat.am կայքի միջոցով: Աղյուսակները armstat.am –ում հղում ունեն այս որակի նկարագրություններին և սովորաբար օգտագործվում են սպառողներին վիճակագրական արտադրանքների փաստաթղթավորման համար: Առաջին ծրագրի ընթացքում համակարգված որակի աշխատանքները դեռևս սաղմնավորման փուլում էին գտնվում և ստանդարտները քննարկվում և պաշտոնականացվում էին միջազգային համաժողովներում և Եվրոստատի աշխատանքներում: Որակը սերտորեն կապակցված է տարածման հետ (պետք է համապատասխանի սպառողների կարիքներին՝ հասկանալու համար յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի բնույթը և սահմանափակումները) և հետևաբար բնական է, որ այս երկրորդ Թվինինգ ծրագիրը ժամանակ է հատկացրել քննարկելու, թե ինչպիսի զարգացումներ են եղել որակի աշխատանքների հետ կապված ՀՀ ԱՎԾ-ի ներսում առաջին ծրագրից ի վեր: ՀՀ ԱՎԾ-ն վերջերս հիմնել է նվիրյալ որակի բաժին: Սա համապատասխանում է ներկայիս Եվրոպական լավագույն փորձին: Եվրոստատի և Որակի Ապահովման Շրջանակի (ՈԱՇ) համաձայն <<Որակի ղեկավարի>> աշխատակցի հաստիքը և որակի բաժինը պետք է հստակ ներկայացվեն ԱՎԾ-ի կազմակերպչական կառուցվածքում:

4. Ձեռքբերումների կայունություն

Ընդհանուր առմամբ մեր եզրակացությունն այն է, որ ծրագրի 1-ին բաղադրիչի՝ *Վիճակագրության տարածում* ձեռքբերումները կայուն են:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցներն ամբողջությամբ կարող են շարունակել աշխատանքը այնպես, ինչպես արվել է ծրագրի իրականացման ընթացքում և առաջարկվել է տարբեր առաքելությունների զեկույցներում: Թվինինգը որպես գործիք անդրադառնում է միայն տենխնկական կարողություններին և աշխատակիցների հմտություններին: Սա

նշանակում է, որ կայունությունը մեծապես կախված է ՀՀ ԱՎԾ աշխատակիցների Թվինինգ ծրագրի շրջանակներում ձեռք բերված կարողությունների պահպանումից, և նույն աշխատակիցների հմտությունները այլ աշխատակիցներին փոխանցելու պատրաստակամությունից և կարողությունից:
Այս տեսանկյունից կասկած չկա, որ ձեռքբերումները կայուն են, սակայն ենթակառուցվածքի տեսանկյունից մտահոգության առիթ կա:

Տարածման ռազմավարության արդիականացում

Արդիականացվել է տարածման ռազմավարությունը և մենք վստահ ենք, որ ՀՀ ԱՎԾ-ն ունի անհրաժեշտ հմտություններ՝ շարունակելու արդիականացնել և փոխել ռազմավարությունը երկու տարին մեկ անգամ, ինչպես և մենք առաջարկում ենք: Ի վերջո տարածման ռազմավարության կայունությունը կախված է ղեկավար կազմի աջակցությունից, որն անհրաժեշտ է ռազմավարության մեջ սահմանված գործողությունների և ՀՀ ԱՎԾ կարողությունների համար, որպեսզի հնարավոր լինի հավաքագրել և ագրեգացնել “սպառողների կարիքները” որպես գործողություններ, որոնք կարող են իրականացվել առկա ռեսուրսներով:

Թարմացնել և բարելավել սպառողների բավարարվածության հետազոտությունը

Բարելավված և արդիականացված հետազոտությունը կայուն է: Կայունության հիմնահարցերի հիմքում ընկած են արդյունքների վերլուծությունները և դրանցից բխող գործողությունների ծրագրերը՝ ուղղված վիճակագրական արտադրանքի, որակի հռչակագրերի և տարածման բարելավմանը:

Սպառողների հետ կանոնավոր երկխոսության համար ներդրված գործիքներ և մեթոդներ

“Սպառողների հետ կանոնավոր երկխոսության համար ներդրված գործիքների” առնչությամբ կայունության հարցեր չկան, սակայն ողջ երկխոսությունը սպառողների հետ կախված է նրանից, թե որքանով է հաստատությունը պատրաստկամ և զինված տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով՝ իրականացնելու համար սպառողների առաջարկությունները: Եվ ի վերջո կայունությունը կախված է ՀՀ ԱՎԾ փոփոխվելու կարողությունից. գործիքներն ինքնին կայուն են: Մենք առաջարկում են ստեղծել սպառողների ֆորմալ «խորհուրդներ»: Նմանատիպ խորհուրդները կպահանջեն որոշ ռեսուրսներ վիճակագրության ճյուղային բաժիններից:

Armstat.am կայքի և SS ենթակառուցվածքների արդիականացում

SS աշխատակիցները ընդհանուր առմամբ շատ հմուտ և մոտիվացված են եղել փոփոխություններ կատարելու armstat.am և armstatbank.am կայքերում՝ դրանով իսկ ապահովելով, որ այս հարթակները արդիական լինեն և համապատասխան: Այնուամենայնիվ, համակարգչային սարքավորումները, օպերացիոն համակարգը և ծրագրային ապահովումները (ԲԿՀ), որոնցով վարվում է armstat.am կայքը լավագույնս բնութագրվում են որպես <<մահացող>> և խիստ կարիք ունեն արդիականացման: Որքանով մենք հասկանում ենք, ՀՀ ԱՎԾ-ն նախատեսում է փոխարինել այս իրերը առաջիկա Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում:

5. Առաջարկություններ ապագայի համար (կարճաժամկետ և երկարաժամկետ)

Հաղորդակցության և տարածման ռազմավարության արդիականացում

Տարածման տեխնոլոգիաները և սպառողների ակնկալիքները շատ արագ են փոփոխվում, հետևաբար մենք ունենք հետևյալ առաջարկությունները.

Սպառողների հետ փոխազդեցության գործիքներ և համակարգված մեթոդներ

- Ներդնել ֆորմալ սպառողների խորհուրդ կոնկրետ (վիճակագրության) ոլորտների համար
- Ավելացնել ֆորմալ խորհրդի ցանկերը և դրանց անդամներին պաշտոնական կայքում:

Տարածման ռազմավարության արդիականացում

Հաղորդակցության և տարածման ռազմավարությունը պետք է դիտարկել որպես <<կենսական>> փաստաթուղթ, որը կարիք ունի եթե ոչ մշտական, ապա գոնե՝ կանոնավոր ուշադրության: Մենք հետևաբար ՀՀ ԱՎԾ-ին տալիս ենք հետևյալ առաջարկությունները.

- Հղում անել հիմնական հաղորդակցության և տարածման ռազմավարությունը համապատասխան ենթառազմավարություններին – օրինակ՝ Գյուղատնտեսական համատարած հաշվառման տարածման ռազմավարություն
- Դիտարկել այլ սոցիալական միջոցներ Facebook-ից բացի (օրինակ Twitter, LinkedIn, և այլն) որպես սպառողների հետ անմիջական հաղորդակցության գործիքներ (2017)
- Համալրել տարածման ռազմավարությունը մի գլխով, որը պետք է ընդգրկի սոցիալական միջոցները:

Ներդնել սպառողների վստահության հետազոտություն

Մենք խորհուրդ ենք տալիս, որ ՀՀ ԱՎԾ-ն ներդնի սպառողների վստահության հետազոտություն՝ մշտադիտարկելու համար ընդհանուր վստահությունը ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքի հանդեպ և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հանդեպ: ՀՀ ԱՎԾ-ի համար անհրաժեշտ է՝

- Նախագծել հետազոտություն՝ օգտվելով ՏՀԶԿ առաջարկություններից և թույլ տալ իրականացնել միջազգային համադրություններ
- Հետազոտությունն իրականացնել 2017 թվականին և 2020 թվականին համեմատական ելակետային բազա ունենալու համար:

Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացում և բարելավում

Ինչ վերաբերվում է սպառողների բավարարվածության հետազոտությանը, դեռևս այս առումով պետք է կայացվեն մի քանի կարճաժամկետ որոշումներ- հետևաբար մենք առաջարկում ենք, որ դրանք պետք է կայացվեն նախքան ծրագրի ավարտը և ոչ ուշ քան 2017 թ. սեպտեմբեր ամսվա վերջը: Ահա դրանք՝

- Իրականացնել հանդիպումներ թիրախային խմբի սպառողների ներկայացուցիչների հետ, որոնք պետք է ներկայացնեն ԶԼՄ-ները և մամուլը նախքան 2017 թ. հունիսի վերջ – միգուցե դա կարող է զուգորդված լինել նոր կայքի մեկնարկի հետ:
- Որոշում կայացնել, թե ինչպես կարելի է կայքում տեխնիկապես ներկայացնել Սպառողների բավարարվածության հետազոտությունը
- Որոշել, թե ինչպես պետք է բաշխել այդ հետազոտությունը համապատասխան ռեսպոնդենտների միջև
- Մշակել գործողությունների ծրագիր սպառողների հետազոտության արդյունքները տարբեր սպառողների խմբերին հաղորդելու համար
- Մշակել գործողությունների ծրագիր սպառողների բավարարվածության հետազոտության արդյունքները ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին հաղորդելու համար:
- Մշակել գործողությունների ծրագիր ապահովելու համար, որ եզրահանգումները, քաղված դասերը ներառված են ամենօրյա աշխատանքում:

Armstat.am կայքի արդիականացում

Armstat.am կայքի վերաբերյալ մենք ունենք հետևյալ առաջարկությունները

- Որոշել լրամշակված armstat.am կայքի մեկնարկը 2017 թ. հունիսի 15 -ին
- Պետք չէ պահպանել նախկին կայքը, այն պարզապես կշփոթեցնի օգտվողներին
- Ուղարկել մամուլի հաղորդագրություն armstat.am կայքի փոփոխման նախորդ օրը – կայքում ծանուցում տեղադրել
- Ստեղծել գլխավոր պլան էլեկտրոնային տարածման համար
- Պետք է հատկացվի բյուջե համակարգչային սարքավորումների և armstat.am կայքի ծրագրային ապահովումների ընդհանուր փոխարինման համար
- Armstatbank.am կայքի ընդհանուր համակարգչային սարքավորումների փոխարինման համար բյուջե
- Ստեղծել ամբողջությամբ ներկայացուցչական փորձարկման և զարգացման միջավայր
- Համաձայնեցնել ինտերնետի մշակումը SS ռազմավարության հետ (գործընթացը պետք է սկսվի)
- Աշխատակիցների վերապատրաստում համապատասխան տեխնոլոգիաների վերաբերյալ – Java, Json, JsonStat, dot.NET, ինտերնետ սերվեր տեխնոլոգիաներ, փոխազդեցությունների և վիզուալիզացիայի գործիքներ

Համակարգչային սարքավորումների փոխարինման վերաբերյալ արված առաջարկությունները հրատապ են: Քանի որ,ԱԵ փորձագետները անհանգստացած են,

որ ներկայիս սարքավորումների աշխատանքը պարզապես կարող է ընդհատվել՝ թողնելով ՀՀ ԱՎԾ-ին առանց ինտերնետի տարածման:

Որակի աշխատանք

Որակի հետ կապված աշխատանքների վերաբերյալ մենք կարող ենք տալ հետևյալ առաջարկությունները.

- Համոզվել, որ կազմակերպության կառուցվածքի սխեմայում արտացոլված է որակի բաժինը
- Որակի ղեկավարի պաշտոնը պետք է հստակ նշվի armstat.am կայքում
- Որակի քաղաքականությունը/որակի աշխատանքի ռազմավարությունը պետք է հեշտությամբ հասանելի լինի armstat.am կայքում

6. Կարիքների նույնականացում լրացուցիչ աջակցության համար

Առաջարկությունների մեծ մասը կարող է իրականացվել՝ առանց ՀՀ ԱՎԾ-ին լրացուցիչ ֆինանսական կամ տեխնիկական աջակցության տրամադրման:

Մշակել խմբագրական կառուցվածք ՀՀ ԱՎԾ-ի համար

Մենք առաջարկում ենք, որ ՀՀ ԱՎԾ-ն մշակի խմբագրական կառուցվածք հաղորդակցության և տարածման համար: Նման կառուցվածքի ստեղծման համար կպահանջվեն նվիրյալ աշխատակիցներ համապատասխան հմտություններով, կարողություններով մամուլի և լրատվամիջոցների ոլորտից: Անհրաժեշտ գիտելիքների մի մասը կարող է փոխանցվել արտաքին աջակցության միջոցով, սակայն իրականում լիարժեք օգտակար լինելու և անհրաժեշտ ազդեցություն ունենալու համար պետք է ՀՀ ԱՎԾ-ն աշխատանքի ընդունի և պահպանի աշխատակիցների, որոնք ունեն զգալի փորձ մեդիա ոլորտում: Մենք միանգամայն վստահ ենք, որ դրա համար կպահանջվի լրացուցիչ օրեկան բյուջե և արտաքին տեխնիկական օժանդակություն նոր խմբագրական կառուցվածքի ներդրման ժամանակաշրջանում:

Մշակել ռազմավարություն և հարակից գործողությունների ծրագիր թվայնացված հրապարակումների համար

Մեր կարծիքով, ՀՀ ԱՎԾ-ն ի վերջո պետք է մշակի ռազմավարություն թվայնացված հրապարակումների համար: Ոչ շատ հեռավոր ապագայում ակնկալվում է, որ բոլոր տպագիր/թղթային հրապարակումներին կարող է վերջ դրվել և այդ դեպքում բոլոր հրապարակումները պետք է իրականացվեն թվայնացված ֆորմատով: Այս անցումը պետք է արտացոլվի armstat.am –ի արդիականացման աշխատանքներում; Նման ռազմավարությունը պետք է մշակվի այլ ԱՎՀ-ների հետ իրականացված փակ քննարկումների արդյունքում և հետևաբար կպահանջի լրացուցիչ արտաքին օժանդակություն:

Armstat.am կայքի արդիականացում

Armstat.am կայքի արդիականացումը և միաժամանակ թվայնացված հրապարակման ռազմավարության մշակումը պահանջում են շատ նախնական ներդրումներ, որ ամենայն հավանականությամբ կպահանջի արտաքին ֆինանսական աջակցություն: Արդիականացումը տրամաբանորեն պետք է բխի թվայնացված հրապարակման ընդհանուր ռազմավարությունից կամ առնվազն armstat.am կայքի արդիականացումը պետք է բավականաչափ ճկուն լինի՝ աջակցելու համար թվայնացված հրապարակման ռազմավարությունից բխող բոլոր պահանջներին: Նախքան արդիականացման նախաձեռնումը ՀՀ ԱՎԾ-ն պետք է մշակի պահանջների տեխնիկական նկարագիր և վերլուծի ԱՎՀ-ում առկա տեխնիկական լուծումները և այն լուծումները, որոնք առկա են Երևանում: Այս նախնական վերլուծական աշխատանքը կպահանջի օժանդակություն ԱՎ-ի փորձագետների կողմից և տեղական տեխնիկական խորհրդատուների կողմից: Armstat.am կայքի արդիականացումը նաև կպահանջի նոր գրաֆիկական <<արտաքին տեսք>>, գրաֆիկական աշխատանքների ստացման աղբյուր պետք է հանդիսանա տեղական որևէ նախագծային կազմակերպություն:

7. Չլուծված խնդիրներ

Ծրագրի պարտադիր արդյունքների գնահատման և պայմանագրում ձեռքբերումների համապատասխան ցուցանիշների առումով, մենք որպես փորձագետներ չենք տեսնում որևէ չլուծված խնդիրներ: Այս հաշվետվության կազմման պահին միայն մի քանի հարցեր պետք է դեռևս ավարտին հասցվեն և վերափոխված armstat.am կայքը պետք է ներկայացվի հանրությանը, սակայն դա շատ հեշտությամբ կարելի է իրականացնել մինչև ծրագրի իրականացման ժամանակահատվածի ավարտը:

Շարունակել էլեկտրոնային տարածման բարելավումը

Ինչ վերաբերվում է www.armstat.am և armstatbank.am կայքերի վերաբերյալ կատարված աշխատանքին, ապա ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցները և մենք սկսել ենք մի շարք տեխնիկական գործողություններ՝ նպատակ ունենալով ներդնել քարտեզներ, գրաֆիկներ և տարբեր տեսակի փոխազդեցություններ ժամանակակից վեբ տարածման հետ կապված: Քանի որ տեխնիկական հարթակը տեխնոլոգիապես հնացած է, այն ամենը ինչ հույս ունեին իրականացնել ՀՀ ԱՎԾ աշխատակիցները և ԱԵ փորձագետները հնարավոր չեղավ իրագործել: Ներկայումս SS աշխատակիցների տեխնիկական հմտությունները չեն կարող ամբողջությամբ օգտագործվել հնացած SS համակարգերի պատճառով: Ինչը որ նախկինում արդեն նշվել է կայունության պարբերության ներքո:

ՀՀ ԱՎԾ- ի իմիջի և ընկալման փոփոխումը

Չնայած Թվինինգ ծրագրի նկարագրության, պարտադիր արդյունքների և ձեռքբերումների ցուցանիշներում նշված չի եղել, սակայն բաղադրիչ 1-ի բոլոր գործողությունները մշակվել են վերջին հաշվով անդրադառնալու ՀՀ ԱՎԾ-ի իմիջի և հանրային ընկալման բարելավմանը: Այս փոփոխությունը շարունակական հարց է և ՀՀ ԱՎԾ-ն պետք է մշտապես անդրադառնա այս հարցին և աշխատի իր իսկ իմիջի բարելավման ուղղությամբ:

Պետք է դիտարկել արմատական նախաձեռնությունները, ինչպիսիք են օրինակ խմբագրական միավորի ստեղծումը, որը պետք է համալրված լինի էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների ոլորտում զգալի աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցներով և հավանաբար անհրաժեշտ է սա իրականացնել, եթե ՀՀ ԱՎԾ-ն ցանկանում է հիմնովին փոխել իր կազմակերպության իմիջը տարբեր զանգվածային լրատվական միջոցների շրջանում:

Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2017 թ. մայիսի 30-հունիս 2**

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.8: Հետևել ձեռքբերումներին և առաջարկություններ ապագայի համար

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Քննարկել բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից ի վեր
- Քննարկել ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Նախապատրաստել առաջարկություններ ձեռքբերումների կայունության վերաբերյալ
- Նախապատրաստել առաջարկություններ ՀՀ ԱՎԾ-ի հետագա աշխատանքների համար ծրագրի ավարտից հետո
- Բացահայտել առկա խնդիրները և կարիքները հետագա աջակցության համար, եթե այդպիսիք կան

2. Գործողության սպասվող արդյունքը

Տարածման բաղադրիչի ամփոփում (բաղադրիչի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ):

- Կարգավիճակը ծրագրի սկզբում
- Ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Ձեռքբերումների կայունություն
- Առաջարկություններ ապագայի համար (կարճաժամկետ և երկարաժամկետ)
- Պարզաբանումներ առկա խնդիրների վերաբերյալ

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Պրն Վանուշ Դավթյան
- Տկն Նարինե Մուշեղյան

Այլ աշխատակիցներ

- Տկն Սիլվա Ուլուբաբյան
- Տկն Նելլի Մարգարյան
- Տկն Գոհար Նշանյան
- Տկն Ալինա Հունանյան
- Տկն Արմինե Մարտիկյան
- Տկն Լիլիթ Կարապետյան
- Տկն Աիդա Մարտիրոսյան
- Տկն Արմենուհի Առուշանյան
- Տկն Սոնա Շախգելդյան

<u>ԱԵ փորձագետներ</u>

- Քարստեն Զանգենբերգ, փորձագետ, Դանիայի վիճակագրություն
- Պրն Յեսպեր Էլեմոսե Յենսեն, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

Հավելված 2. Առաքելության ծրագիրը

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօրից հետո *(30/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
<u>Վեր կայքի բարելավում</u>	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի գնահատում և վերջին առաքելությունից ի վեր իրականացված աշխատանքների ներկայացում ՇԵ կողմից *վեր կայքի բարելավման վերաբերյալ* Հետևել առկա խնդիրներին կապված *վեր կայքի բարելավման հետ*
Չորեքշաբթի, առավոտ, *(31/5)* *<u>Վեր կայքի բարելավում</u>*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	*Վեր կայքի բարելավման* հետ կապված առկա խնդիրների հետևում, շարունակություն Կարիքների նույնականացում լրացուցիչ աջակցության համար՝ կապված *վեր կայքի բարելավման հետ*
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(31/5)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկել ծրագրի արդյունքների կարգավիճակը տարածման բաղադրիչի շրջանակներում Հետևել առկա հարցերին կապված *տարածման բաղադրիչի հետ ընդհանուր առմամբ* Քննարկումներ, թե ինչպես պետք է ապահովել ձեռքբերումների կայունությունը
Հինգշաբթի, առավոտյան, *(1/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Շահառուների հետ հանդիպում
Հինգշաբթի, կեսօրից հետո *(1/6) 14:30*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկումներ Թվինինգ ծրագրից հետո հետագա առաջընթացի վերաբերյալ և առաջարկություններ ապագայի համար (կարճաժամկետ և երկարաժամկետ)
) Ուրբաթ, առավոտյան *(2/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Վերջնական եզրակացությունների նախապատրաստում, առաջարկություններ և առաքելության

			հաշվետվություն
		Չնախատեսված հանդիպումներ	
Ուրբաթ, կեսօրից հետո *(2/6)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Ամփոփիչ հանդիպում և արդյունքների ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին

Հավելված 3: Հանդիպումների մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ:</u>

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Նարինե Մուշեղյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Անահիտ Ներսիսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
- Գոհար Նշանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Արմինե Մարտիկյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
- Արմեն Մարտիրոսյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
- Անահիտ Նազարյան, Շինարարության վիճակագրության բաժին
- Աննա Ամրոյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Լուսինե Մարկոսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Հասմիկ Եղիազարյան, Միջազգայյին վիճակագրական համագործակցության բաժին
- Սոնա Շահգելդյան, SS վարչություն
- Աիդա Մարտիրոսյան, SS վարչություն
- Արմենուհի Առուշանյան, SS վարչություն
- Մովսես Չապանյան, SS վարչություն
- Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Սուսաննա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Նադեժդա Աստվածատուրովա, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Գեորգի Թորոսյան, Տրանսպարտի և կապի վիճակագրության բաժին
- Կարինե Կույումջյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Մարիամ Երիցյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
- Ռուզաննա Շաբոյան, Որակի կառավարման բաժին
- Ալինա Գրիգորյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Անի Համբարձումյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Սյուզաննա Խաչատրյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
- Սաթենիկ Հակոբյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին

Արտաքին շահառուներ

- Ա. Մովսիսյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Հակոբ Խաճատրյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Նինա Վարդանյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Լուսինե Կոստանյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Գևորգ Քեշիշյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Հասմիկ Ղազարյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Անահիտ Մնացականյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Արմեն Բրոյան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
- Սյուզի Մուրադյան, Արմենպրես լրատվական գործակալություն
- Դիանա Աֆյան, ՀՀ Կենտրոնական բանկ
- Միքայել Մելքոնյան, Միջազգային տեղեկատվական գործակալություն <<Նովոստի-Արմենիա>>
- Արևիկ Թորոսյան, Առողջապահության ազգային ինստիտուտ
- Նարինե Ռուշանյան, ՀՀ Մշակույթի նախարարություն
- Շուշան Գյարզոյան, ՀՀ Սփյուռքի նախարարություն
- Լուսինե Ժաժոյան, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
- Լիլիթ Ղարիբյան, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
- Սիրանույշ Բադալյան, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
- Աննա Պապյան, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
- Գարիկ Մկրտչյան, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
- Նարեկ Կարապետյան, ՀՀ ֆինանսների նախարարություն
- Հայկ Բարսեղյան, ՀՀ Արդարադատության նախարարություն
- Արտյոմ Մեսրոպյան, ՀՀ Արդարադատության նախարարություն
- Արմինե Մաթոսյան, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Նունե Հովհաննիսյան, ՀՀ Բնապահպանության նախարարություն
- Հասմիկ Հովհաննիսյան, ՀՀ Բնապահպանության նախարարություն
- Վահագն Պետրոսյան, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- Աշոտ Ավետիսյան, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- Իվետա Արզումանյան, ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
- Արման Գալստյան, ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
- Ալլա Կարապետյան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
- Լուսինե Ալեկսանյան, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ

- Հասմիկ Խաչատրյան, ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտե
- Աշոտ Ավագյան, ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտե
- Արմեն Քոչարյան, ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտե
- Տաթև Միրզոյան, Երևանն այսօր

ԹՄԽ թիմ

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, թարգմանիչ